

ԴԻՄՈՒՄ ԵՄ ՀԱՏԿԱՊԵՍ ՆԻԿՈԼԻՆ ՈՒ ՎԱԶԳԵՆԻՆ. «ԵԹԵ ԻՐՈՔ ԹԱՆԿ Է ՁԵՁ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ՈՒՐԵՄՆ...»

Posted on February 16, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



**Պրոֆ. Աշոտ ՏԵՐ-ՍԻՆԱՍԵԱՆ ղաասախօս է Երեւանի Պետ.
Համալսարանի Բանասիրական բաժնէն ներս: Ան
հեղինակ է գրականագիտական աշխատութիւններու եւ
ուսումնասիրութիւններու: Որպէս աւագ սերունդի անկախ
մտաւորական, քաջութիւնը կ'ունենայ ներհայաստանեան
անհեռանկար պայքարի մէջ ընկղմած երկու կողմերուն
կոչ ընել զգաստանալու: Խմբ.**

Պրոֆ. Աշոտ Տեր-Սինասյան, Երևան 5 Փետրվար 2021

Բավական է, համբերությունն էլ սահման ունի: Ամեն կերպ աշխատեցինք առանց որևէ մկին վիրավորելու, բարեկրթության սահմաններում հորդորել, կոչ անել՝ երկիրը վերջնական կործանումից փրկելու համար ժամանակավորապես հրաժարվել առճակատումներից, համախմբվել ու միասնական ու ժերով դիմագրավել սպասվող նոր արհավիրքներին:

Սակայն ու՞մ ես ասում... Այդ կոչ-հորդորներին չարձագանքեցին նույնիսկ պատերազմի օրերին... Արդեն իսկ կայացած անասելի աղետի ու անդառնալի կորուստների մեղքը իրար վրա գցելով, հազարավոր զոհերի եւ վիրավորների հանդեպ իբրև թե հոգատարության եւ կարեկցանքի իրավունքը միայն իրենց վերապահելով՝ իրականում կենաց-մահու կռիվ են տալիս, այո՛, ԱԹՈՌԱԿՈՒԿ են տալիս երկու կողմերն էլ:

Եվ նողկալին այն է, որ այդ ամենը թմբկահարվում է որպես ժողովրդի պահանջ, իբրև թե ժողովրդի անունից: Ժողովրդին պառակտել, հանել են իրար դեմ հատկապես ՖԲ-ի էջերում, քանի որ հեռուստաթերը գերազանցապես պատկանում է հակակառավարական ուժերին: Իսկ միակ ազատ հարթակ ենթադրվող ՖԲ-ի էջերը, բացառությամբ մի քանի տասնյակ իրոք մտավորականների գրառումների, նույնպես առլեցուն են մերկապարանոց նիկոլական և մերկապարանոց հականիկոլական անմակարդակ, գռեհիկ, սակայն ամեն ինչի «գիտակ» հաճախագրություններով:

ՌԻՍԻ ղրանց չնմանվելու համար խոսքս ուղղում եմ երկու կողմերի պարագլուխներին և այս անգամ ոչ թե որպես հորդոր, այլ ՊԱՀԱՆՁ: Ձեզանից ոչ մեկը այնքան միամիտ չէ, որ չհասկանա օրհասի պահին համախմբման անհրաժեշտությունը: Ով ինչ սխալներ է կատարել, ով ինչի համար պետք է պատասխան տա՝ թողե՛ք ապագային : Ժամանակավորապես մոռացե՛ք ձեր փառասիրությունները և վայրկյան առաջ սեղանի շուրջ նստեք՝ որոշելու, թե ինչ «շերեփով» եք ներկայանալու մեր ինքնության փրկության դիվանագիտական մարտին:

Դիմում եմ հատկապես ՆԻԿՈԼԻՆ և ՎԱԶԳԵՆԻՆ. **եթե իրոք թանկ է ձեզ համար ՀԱՅՐԵՆԻԹԸ, առանց նախապայմանի, առանց դիմացինի կարծիքը նախապես իմանալու՝ առաջինը համախմբման ձեռք մեկնե՛ք:** Քաղաքական խաղերի կամ ինքնասիրահարվածության ժամանակը չէ՛. վեհանձն և հայրենասեր մարդը նա է, ով

առաջինը կառաջնորդվի այս գիտակցությամբ: Հակառակ դեպքում ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, որի
անունից սիրում եք խոսել, և ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ձեզ երբեք չե՛ն ների:

*ՀԳ Այն լրատվամիջոցները և ՖԲ-ի իմ ընկերները, ովքեր համամիտ են գրությանս,
խնդրում եմ սրտիկներ դնելու փոխարեն արագ տարածեք այն, որպեսզի վայրկյան առաջ
որևէ կերպ հասնի հասցեատերերին:*

There are no comments yet.